

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՍՏԵՐԼԻՆԳՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 4-ից 11-ը Շոտլանդիայի Տրերք քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների 9-րդ նստաշրջանը, որին մասնակցում էին եվրոպական մայրցամաքի շուրջ 800 եկեղեցականներ, դիտորդներ և թղթակիցներ:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու ժողովին իրենց մասնակցությունը բերեցին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Շուրջ ութ օր տևող այս ժողովի ընթացքում մշակվեցին մի շարք փաստաթղթեր՝ ուղղված համայն մարդկությանը, պետությունների ղեկավարներին, որտեղ միահամուռ կոչ ուղղվեց՝ միակամ աշխատանքով պաշտպան կանգնել խաղաղության սուրբ գործին: Ժողովականները գոհունակությամբ նշեցին նաև այն փաստը, որ ՍՍՀՄ-ի կառավարությունը արդեն բազմիցս անգամներ միակողմանիորեն առաջարկել է դադարեցնել ատոմական զենքերի փորձարկումը:

Ընտրվեցին Եվրոպական Եկեղեցիների Համաժողովի նոր ղեկավար անձինք: Ի թիվս այլոց, Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը վերընտրվեց Նշանակումների Կոմիտեում, իսկ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը ընտրվեց Խորհրդատու Կոմիտեի անդամ:

Սեպտեմբերի 12-ին ժողովն ավարտեց իր աշխատանքները:



Ժողովին մասնակցած Հայ Եկեղեցու ներկայացուցիչները